1913

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎՐԱ

Հողմերի առջև ցըրված, հալածված,
Քարեքար զարկված, տանջված ու հյուծված
Ինչ է ուզում նա դալուկ շրթունքով,
Անվերջ բողոքով, անզոր խնդիրքով.
5 Իր փառքն է ուզում, թե թագն ու գահո՞ւյք։
– Իր կյանքն է ուզում, իր պատիվն, իր գույք։

Ո՜վ, ամո՜թ, ամո՜թ... ամո՜թ ամենքին,
Ամո՜թ և մարդուն և ժամանակին։
Շունն էլ չըպիտի էն խընդրեր շանից,
10 Ինչ մարդն է խընդրում իրեն նմանից
Էս առատ-արձակ աշխարհքի միջին –
Իր կյանքն, իր պատիվն, իր գույքը չընչին...

Ափսո՜ս էն պայծառ, պարզ արեգակին,
Ափսո՜ս էն զառվառ ծըլին ու ծաղկին,
15 Ափսո՜ս աստղերին, ծովին ալեծուփ,
Ափսո՜ս դաշտերին, լերանց երկնահուպ.
Ինչպե՜ս սըրանց մեջ ծընան հըրեշներ
Էսքա՜ն մարդատյաց, անխիղճ ու անսեր...

Ո՛չ, հանգի՛ստ, հոգի՛ս, իզուր չի ոչինչ.
Ոչ ծիլ ու ծաղիկ, ոչ արևը ջինջ,
Ոչ խոսքն հանճարեղ, ոչ երգը քնքույշ։
Կա մեծ ու զըվարթ, իմաստուն մի ույժ,
Որ Մութն աշխարհքից տանում է մարդուն
Դեպի Լույս աշխարհք, սեր, եղբայրություն...

Ամեն մի չարիք ունի իրեն վերջ
Ու կա հատուցում ամեն գործի մեջ.
Կա մխիթարանք տառապող հոգուն,
Լացող աչքերին կա հանգիստ ու քուն,
Եվ դարձ կա նըրան, որ վառեց խարույկ
Խըլեց ուրիշից կյանք, պատիվ ու գույք։